ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- -------- 2021 թվականի №---Ա
քաղ. Երևան

«ԹԱՐԳՄԱՆՉԱՆՑ» ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «ԹԱՐԳՄԱՆՉԱՆՑ» արտադրական կոոպերատիվին ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №564Ա որոշմամբ «ԹԱՐԳՄԱՆՉԱՆՑ» արտադրական կոոպերատիվին (այսուհետ՝ Կոոպերատիվ) տրամադրվել է ռադիոհաճախականության օգտագործման №1026 թույլտվությունը,

բ) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17.1 հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարը սահմանվում է տարվա համար և ենթակա է վճարման յուրաքանչյուր եռամսյակի համար հավասարաչափ՝ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը ներառյալ, իսկ 10-րդ մասի համաձայն՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների գումարների վճարումն օրենքով սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում գանձվում է տույժ՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար պակաս վճարված վճարի 0,075 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 730 օրվա համար (մինչև 2018 թվականի հունվարի 1-ը՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար պակաս վճարված վճարի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար),

գ) Կոոպերատիվը չի վճարել ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարները, ինչի մասին բազմիցս տեղեկացվել է, այդ թվում՝ Հանձնաժողովի 2020 թվականի հոկտեմբերի 5-ի №ՍՇ/34.2-Մ2-9/4209-2020, 2021 թվականի հունվարի 11-ի №ՍՇ/34.2-Մ2-9/27-2021 և ապրիլի 2-ի №ՍՇ/34.2-Մ2-9/1026-2021 գրություններով,

դ) Կոոպերատիվի կողմից Օրենքի 17.1 հոդվածի պահանջների խախտման՝ ռադիոհաճախականության օգտագործման վճարների չվճարման փաստի ուսումնասիրության նպատակով 2021 թվականի ապրիլի 8-ին Հանձնաժողովը վերջինիս նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի մասին ծանուցել է 2021 թվականի ապրիլի 8-ի №ԳԲ/34.2-Մ2-9/1104-2021 գրությամբ,

ե) Կոոպերատիվը հարուցված վարչական վարույթի շրջանակում ուսումնասիրվող հարցի կապակցությամբ որևէ փաստարկ կամ հիմնավորում չի ներկայացրել,

զ) իրականացված վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ Կոոպերատիվը խախտել է Օրենքի 17.1 հոդվածի պահանջները և մինչ օրս չի կատարել ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների և ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժի վճարման պարտավորությունը, որը 2021 թվականի մայիսի 5-ի դրությամբ կազմում է 692 837 (վեց հարյուր իննսուներկու հազար ութ հարյուր երեսունյոթ) դրամ, որից 3 874 (երեք հազար ութ հարյուր յոթանասունչորս) դրամ գումարի մասով (հաշվարկված՝ մինչև 2016 թվականի նոյեմբերի 29-ը) և 265 250 (երկու հարյուր վաթսունհինգ հազար երկու հարյուր հիսուն) դրամ գումարի մասով (հաշվարկված՝ 2016 թվականի նոյեմբերի 30-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 24-ը) առկա են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե գումարի փոխանցումը պարտավորեցնելու մասին Հանձնաժողովի համապատասխանաբար 2016 թվականի նոյեմբերի 29-ի №374Ա և 2019 թվականի դեկտեմբերի 24-ի №503Ա որոշումները, որոնք գտնվում են հարկադիր կատարման փուլում,

է) 2019 թվականի դեկտեմբերի 25-ից մինչև 2021 թվականի մայիսի 5-ի դրությամբ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների և ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժի վճարման՝ Կոոպերատիվի պարտավորությունը կազմում է 423 713 (չորս հարյուր քսաներեք հազար յոթ հարյուր տասներեք) դրամ, որից 300 000 (երեք հարյուր հազար) դրամը ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարն է, իսկ 123 713 (հարյուր քսաներեք հազար յոթ հարյուր տասներեք) դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը, և

հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետը, 17.1 հոդվածի 11-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կոոպերատիվին՝սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել №1026 թույլտվությամբ նախատեսված ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր

վճարների մասով 2019 թվականի դեկտեմբերի 25-ից մինչև 2021 թվականի մայիսի 5-ը հաշվարկված 423 713 (չորս հարյուր քսաներեք հազար յոթ հարյուր տասներեք) դրամ պարտքը, որից 300 000 (երեք հարյուր հազար) դրամը ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարն է, իսկ 123 713 (հարյուր քսաներեք հազար յոթ հարյուր տասներեք) դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը:

2. Ընդունել ի գիտություն, որ Կոոպերատիվն իրավասու է՝

1) սույն որոշման հրապարակումից հետո երեսուն օրվա ընթացքում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կոոպերատիվին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- ---------- 2021թ.